ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Գնել Սանոսյանին

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում եմ ինձ տեղեկություններ տրամադրել հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. 2021 թվականի առաջին չորս ամիսներին ի տարբերություն 2020 թվականի նույն ժամանակահատվածի, Գեղարքունիքում ծնունդների թիվն աճել է գրեթե 35 տոկոսով: Եթե 2020-ին մարզում ծնվել է 467 երեխա, 2021-ին նորածինների թիվը հասել է 627-ի: Հաշվի առնելով այն, որ անցյալ տարվա մարտ ամսից կորոնավիրուսային վարակի հետ կապված տասնյակ հազարավոր մարդիկ զրկվեցին արտագնա աշխատանքի մեկնելուց, ինչը մարզի համար կենսական նշանակություն ունի: Արդյոք ծնունդների աճը կարող է պայմանավորված լինել նաեւ լոքդաունի եւ արտագնա աշխտանքի չմեկնելու հանգամանքով:

2. Եթե ոչ, ապա ինչո՞վ եք պայմանավորում մարզում ծնունենդրի աճը:

3. Խնդրում եմ տրամադրել Գեղարքունիքի մարզի այն գյուղերի անունները, որտեղ արձանագրվել է ծնունդների աճ: Ակնկալում ենք ստանալ թվային ցուցանիշներ առանձին գյուղերում ծնունդների թվի, ինչպես նաեւ ծնված նորածինների սեռերի մասով:

Խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ

Հասմիկ Համբարձումյան

Լրագրող